

վերոյիշեալ գրքին մէջի պատկերին, հտ. Ա, եր. 401: Հաւանական է որ երկուքն ալ մի եւ նոյն աղբիւրէ օգտուած ըլլան, եթէ իրարմէ չեն օրինակած: Իսկ գրքիս եր. 91-ի պատկերը պատրաստուած է Մաւեսաց Աղաւնիի հրատարակածին վրայէն, 1855 եր. 18:

Մեզ համար հետաքրքրականն այն է, որ Մազբիդի պատկերին մէջ Լեւոն ներկայացած է բոլորովն արեւելեան տարազով, — գլուխը փաթթոց, մէջքը զօտի, գէմքը չածիլուած. մինչդեռ Մաւեսաց Աղաւնիի մէջ Լեւոն ներկայացուած է իբրեւ կատարեալ Եւրոպացի, ինչպէս է նաեւ Լեւոնի կիսարձանը: Երկուքին տարբերութեան պատճառն այս կրնայ ըլլալ, որ Լեւոն արարական երկրէ մը — Եգիպտոսէ — նոր դուրս ելած՝ չէր մոռցած դեռ արեւելեան սովորութիւնները, ուստի՝ կը պահէր թէ՛ փաթթոցը, թէ՛ մօրուքն եւ թէ պիտիբը: Լեւոնի փաթթոց կրելը անտանք ուրիշ տեղ (եր. 79), երբ կաստիլյայի Յովհաննէս Ա թագաւորին առջեւ « իր գլխարկն ու փակեղն հանեց, ի նշան խոնարհութեան եւ երախտաղիտութեան: » Այստեղ, ինչպէս զիտել տուած եմ արդէն, « փակեղ » բառին սպաներէնն է *capirote*, Ֆրանսերէն *chaperon*, որ կրնայ թարգմանուիլ նաեւ փաքոց. վասն զի սպան. *capirote* եւ *Ֆրանս. chaperon* ուրիշ բան չեն այլ տեսակ մը փաթթոց, որ հին ժամանակ Եւրոպայի մէջ կը գործածուէր իբրեւ զլիարկ կամ անոր մէկ զարդը (1): Միւս կողմէ ալ գիտենք, թէ Անիի մէջ գտնուած է Գաղիկ Ա. Բագրատունի թագաւորին արձանը, նոյնպէս զլուխը փաթթոցով, որ զարձեալ արարական ազգեցութեան արդիւնք է: Բայց Լեւոնի կիսարձանն այսպէս չէ, այլ զլուխը կը կրէ արքայական թագ մը:

Այս կիսարձանը կը գտնուի Վերսայի թանգարանին մէջ, զետեալ յարկի արձաններու կարգին, եւ կը կրէ 292 թիւը: Գրքիս 110-րդ երեսը դրուածը՝ իմ ձեռքովս յիշեալ կիսարձանին վրայէն ուղղակի լուսանկարուած մէկ պատկերն է: Կիսարձանը քարէ չէ սակայն, այլ գածէ ձուլուած մը, որ կատարուած է Սէն-Դընիի գերեզմանաքարին վրայէն, ինչպէս կը ծանուցանէ վրայի պիտակին գրութիւնը. « Léon V de Lusignan. Roi d'Arménie. + 1393. Basilique de Saint-Denis. »

(1) *La Grande Encyclopédie*, fis. ԺԱ, եր. 859 ք, Chaperon բառից առջեւ կուսայ նիւսեալ տեղեկութիւնք. « On le roulait autour de la tête de plusieurs façons en forme de turban, jusqu'au moment où il devint un véritable chapeau. »